ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՏԵՍՈՒՉ ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՀՌՈՄ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

հունիսի 15-ից 18-ը, 2025թ.

1. ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Արմեն Հակոբյան, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի արևելյան տարածքային կենտրոնի աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության բաժնի ավագ տեսուչ

2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Իտալիայի Հանրապետություն (Հռոմ), հունիսի 15-ից 18-ը, *2025թ.*

3. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ԵԽ երևանյան գրասենյակ

4. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ուսուցողական այց Իտալիայի աշխատանքի պետական տեսչություն

5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Ուսուցողական այցի ընթացքում քննարկվել են՝

- Իտալիայի աշխատանքի տեսչության կառուցվածքի և գործունեության, ինչպես նաև կիրառվող լավագույն փորձը,
- Իտալիայի աշխատանքի տեսչության համագործակցությունը կառավարության, գործատուների և աշխատակիցների, անհատ քաղաքացիների, տեղական առողջապահական մարմինների հետ,

- Աշխատավայրում աշխատողների առողջության և անվտանգ պայմանների ստուգման հիմնական ցուցանիշները,
- Տեսչական գործունեության ազգային համակարգում աշխատանքային իրավունքի և սոցիալական ապահովության հետ կապված հարցերի քննարկում,
- Անօրինական աշխատանքի բացահայտման հետ կապված հիմնական խնդիրները,
- Աշխատանքային իրավունքների պաշտպանության նպատակով իրականացվող ստուգման հիմնական ցուցանիշները:

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Ուսուցողական այցի ընթացքում համագործակցության և փորձի փոխանակման շրջանակներում ներկայացվել է Տեսչական մարմինների գործունեության առանձնահատկությունները, իրականացվող վերահսկողության ձևերին և բնույթին, ինչպես նաև ներկայացվել է կիրառվող լավագույն փորձը:

Աշխատանքային քննարկման ընթացքում ներկայացվել է Տեսչական մարմինների վերահսկողական գործառույթների առանձնահատկությունները, հնարավորությունը ձևավորելու աշխատանքային իրավահարաբերություններում առկա լավագույն ավանդույթներն ու առաջնահերթությունները, ինչպես նաև բարելավելու աշխատանքային ոլորտում իրականացվող վերահսկողության գործիքակազմը:

Ուսուցողական այցի շրջանակներում Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատակիցները գործնական մասնակցություն են ունեցել Իտալիայի Հանրապետության աշխատանքի պետական տեսչության աշխատակիցների կողմից իրականացվող ստուգումներին:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Իտալիայի Հանրապետության աշխատանքի պետական տեսչություն կատարված ուսուցողական այցը հանդիսանում է արդյունավետ հարթակ՝ տեղեկատվության փոխանակման և համագործակցության գործընթացի բարելավման համար:

Որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.

Երկու երկրների միջև փոխայցելություններն ու ակտիվ փոխգործակցությունն արտացոլում են երկկողմ հարաբերությունների հետագա ընդլայնումը, Տեսչական մարմինների միջև լավագույն փորձի փոխանակումը, ինչպես նաև երկկողմ գործընկերության խորացումն ու ընդլայնումը:

Այս հանդիպումն ակնհայտորեն նպաստելու է ինչպես ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ակտիվ ներգրավմանը ընթացիկ աշխատանքներում, այնպես էլ նպաստելու է Հայաստանի Հանրապետության հեղինակության ու դերի բարձրացմանը:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

2025 թվականի հունիսի 23

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՏԵՍՈՒՉ